Աննա Դավիթի Դավթյանին
(Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ահարոնյան 1/9, բն 40
Էլ. փոստ՝ annadavit@gmail.com)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

14.02.2025թ կնքված թիվ ՀԱԳ-ՄԱԾՁԲ-ՖԱ-25/2 ծածկագրով պայմանգիրը միակողմանի լուծելու մասին

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և Աննա Դավիթի Դավթյանի (այսուհետ՝ Կատարող) միջև 14.02.2025թ. կնքված թիվ ՀԱԳ-ՄԱԾՁԲ-ՖԱ-25/2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն Կատարողը ստանձնում է վերոնշյալ պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի 1.1 կետով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից ս.թ. հոկտեմբերի 06-ին ուղարկվել է գրություն՝ ծառայությունների չկատարման վերաբերյալ, Պատվիրատուն ղեկավարվելով վերոնշյալ իրական հիմքերով՝ միակողմանի (ամբողջությամբ) լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՉՈՒԼՅԱՆ

16.10.2025թ.